ԿԳՄՍՆ «Գ. ԷՄԻՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 182 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԵՔ-ԳԷԱԴ-ՄԱԾՁԲ-2021/2-182-1»

ք.Երևան «26» 08 2021 թ.

ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի Գ.Էմինի անվան N182 ավագ դպրոց» հիմնադրամը, ի դեմս կազմակերպության **տնօրեն Ռուզաննա Ալավերդյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա ու ՀՀ գործող օրենսդրության և այլ կիրառելի իրավական ակտերի պահանջների համաձայն, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը**, ի դեմս **կազմակերպության տնօրեն (ռեկտոր) Դավիթ Խիթարյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա ու ՀՀ գործող օրենսդրության և այլ կիրառելի իրավական ակտերի պահանջների համաձայն (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին հիշատակման դեպքում՝ Կողմեր, կնքեցին սույն հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ.

1.1. Սույն Պայմանագրի համաձայն՝ Պատվիրատուի առաջադրանքով՝ Կատարողը ստանձնում է հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման ծառայությունների վճարովի մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Վերապատրաստման ծառայություն)՝ համաձայն սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով (այսուհետ՝ Հավելված N1) սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ժամկետների, պայմանների և պահանջների, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Պայմանագրի և Հավելված N1-ի (ինչպես նաև՝ այլ հավելվածների) պահանջներին համապատասխան պատշաճ, լրիվ, որակյալ և ժամանակին մատուցված Ծառայությունների համար՝ սույն Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետում՝ բացառությամբ սույն Պայմանագրով սահմանված դեպքերի:

1.2. «Հանրակրթության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14.1 կետի և ՀՀ կառավարության՝ 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1667-Ն որոշման հավելվածի՝ Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման կարգի (այսուհետ՝ Կարգ 1-ի)) 2-րդ և 3-րդ կետերի ու սույն Պայմանագրի համաձայն՝ երաշխավորված կազմակերպությունների ցանկում ընդգրկված կազմակերպությունում **ուսուցչի վերապատրաստումը** սույն Պայմանագրով Կատարողի կողմից այնպիսի ծառայության տրամադրումն է, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության) սահմանած՝ ուսուցչի վերապատրաստման չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան ուսուցչի մասնագիտական նոր գիտելիքների, կարողությունների, հմտությունների և ունակությունների յուրացման ու կատարելագործման գործընթաց և իրականացվում է վերապատրաստման դասընթացների միջոցով:

1.3. Պայմանագրի 1.2 կետով սահմանված կարգավորումներին համապատասխան՝ **վերապատրաստման դասընթացը** (այսուհետ՝ **Երաշխավորված կազմակերպության դասընթաց**) վերապատրաստումների ծրագրին համապատասխան բովանդակությամբ ուսումնական պարապմունքների շարք է, որը նպատակաուղղված է ուսուցիչների մասնագիտական զարգացմանը և իրականացվում է վերապատրաստող երաշխավորված կազմակերպության կողմից:

1.4. Կողմերը սույնով փոխադարձ համաձայնությամբ սահմանում են, որ Կատարողի կողմից տրամադրվող Երաշխավորված կազմակերպության դասընթացին ներկայացվող պարտադիր պահանջներից են, այդ թվում՝ այն ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպության կողմից մշակված և ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան ու Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում իրականացման ենթակա լինելը՝ առկա և(կամ) հեռավար եղանակով՝ Պատվիրատու ուսումնական հաստատության միջոցների հաշվին, և ուսուցչի կողմից ընտրվելը (իր ընտրությամբ իրականացվելը):

1.5. Սույն Պայմանագրի 1.2 կետին համապատասխան՝ Վերապատրաստման ծառայությունը մատուցվում է Հավելված N1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և դրանով սահմանված ժամկետներում, ինչպես նաև սույն Պայմանագրով (ներառյալ՝ դրա անբաժանելի մասը կազմող հավելվածներով) և կիրառելի օրենսդրական, ենթաօրենսդրական նորմատիվ և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների համաձայն: Ընդ որում, ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստումը **պարտադիր է** և անցկացվում է Պատվիրատուի՝ ի դեմս տնօրենի կողմից հաստատված՝ ուսուցչի հերթական ատեստավորման ժամանակացույցով նախատեսված ժամկետներին և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի) հրամանով հաստատված՝ տվյալ ուսումնական տարում վերապատրաստումների ժամանակացույցին համապատասխան:

1.6. Վերապատրաստման ծրագր, այն ներառող բոլոր բաղադրիչներով, որոնց մասնակցելու է (են) ուսուցիչ (ներ)ը, և որոնց համար վճարելու է Պատվիրատու ուսումնական հաստատությունը, հետևյալն են՝ **Հանրակրթության բնագավառի օրենսդրություն» (9 ժամ), «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում» (20 ժամ) և «Մասնագիտական զարգացում» (81 ժամ) :Ընդ որում, սահմանված բաղադրիչի ժամաքանակը չի կարող հրամանով հաստատված նվազագույն ժամաքանակից պակաս լինել (90 ժամ): :**

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

2.1. **Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1. կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած վերապատրաստող կազմակերպությունների ցանկից ինքնուրույն ընտրել ատեստավորման ենթակա ուսուցիչներին վերապատրաստող կազմակերպությանը.

2.1.2. ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Վերապատրաստման ծառայության ընթացքը, ժամկետները, որակը, ծավալը, համապատասխանությունը կիրառելի կարգավորող նորմատիվ և անհատական իրավական ակտերի պահանջներին՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.3. եթե մատուցվել է Հավելված N 1-ում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Վերապատրաստման ծառայություն, ապա՝

ա) չընդունել Վերապատրաստման ծառայությունը (դրա արդյունքները)՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ Վերապատրաստման ծառայությունը Պայմանագրին և դրա Հավելված N1-ին (ինչպես նաև փոխադարձ համաձայնությամբ կնքված և Պայմանագրի անբաժանելի մասը կազմող այլ հավելվածներին) համապատասխանող պատշաճ Վերապատրաստման ծառայությամբ անհատույց փոխարինելու ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 և 5.3. կետերով նախատեսված տուժանքը.

բ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Վերապատրաստման ծառայության համար վճարված գումարը ու վճարելու սույն Պայմանագրով սահմանված տուժանքը: Ընդ որում, տուժանքի վճարումը Կատարողին չի ազատում վերջինիս մեղքով կամ այնպիսի հանգամանքների առկայության դեպքում պատճառված վնասները հատուցելու պարտավորությունից, որոնց համար պատասխանատու է Կատարողը:

2.1.4. Պատվիրատուն իրավասու է միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Վերապատրաստման ծառայությունը չի համապատասխանում Հավելված N1-ով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Վերապատրաստման ծառայության մատուցման ժամկետը:

գ) Կատարողն իրավասու չէ տրամադրելու Վերապատրաստման ծառայություններ կամ նա Նախարարության կողմից վաղաժամկետ հանվել է սույն Պայմանագրի 2.4.1. կետով սահմանված Ցանկից կամ Պատվիրատուին հիմնավոր կերպով հայտնի է դարձել, որ Կատարողը համապատասխան Ցանկում ներառվել է ՀՀ գործող օրենսդրության և կիրառելի այլ իրավական ակտերի պահանջների խախտմամբ:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Վերապատրաստման ծառայությունը (դրա արդյունքը), իսկ այդ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ կամ ողջամիտ սեղմ ժամկետում գրավոր և հիմնավորված առարկություններով հայտնել Կատարողին.

2.2.2. Վերապատրաստման ծառայության արդյունքն առանց առարկությունների ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ Պայմանագրով (ներառյալ՝ դրա հավելվածներով) սահմանված վճարման ժամկետն իր կողմից խախտվելու դեպքում՝ նաև սույն Պայմանագրի 5.7. կետով սահմանված տույժը.

2.2.3. ապահովել իր՝ որպես ուսումնական հաստատության ուսուցչի վերապատրաստման գործընթացի պատասխանատուի կողմից իրեն վերաբերող մասով անհրաժեշտ և բավարար նախապատրաստական աշխատանքների պատշաճ և ժամանակին իրականացումը.

2.2.4. ապահովել կազմակերպվող վերապատրաստումներին մասնակցելու նպատակով վերապատրաստող կազմակերպությունների և դասընթացների հրապարակված ցանկից Վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունն ուսուցիչների կարծիքների ու առաջարկությունների հիման վրա և ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 7-ի N 1162-Ա/2 հրամանով սահմանված ծրագրի բաղադրիչների ընտրված լինելը.

2.2.5. ի դեմս տնօրենի՝ վերապատրաստումն սկսվելուց առնվազն 10 (տաս) օրացուցային օր առաջ գրավոր ձևով ուսուցչին տեղեկացնել վերապատրաստող կազմակերպության,

վերապատրաստման ժամկետի, վերապատրաստման ձևի և վայրի (հեռավարի դեպքում՝ հարթակի) մասին:

2.2.6. ի դեմս տնօրենի՝ ուսուցչի ներկայացրած՝ վերապատրաստման դասընթացին մասնակցության և հավաքված կրեդիտների վերաբերյալ փաստաթուղթը ներբեռնել կրթության կառավարման տեղեկատվական համակարգ՝ ուսուցչի բնութագրի բաժնում.

2.2.7. վերապատրաստման ընթացքում ուսուցչին ազատել իր պաշտոնական պարտականությունների կատարումից՝ վարձատրության պահպանմամբ, եթե վերապատրաստման իրականացման ձևաչափը պահանջում է ուսուցչի ֆիզիկական կամ հեռավար ներկայություն ուսուցչի պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում.

2.2.8. ուսուցչին ազատել վերապատրաստման ծրագրով նախատեսված համապատասխան բաղադրիչ(ներ)ին մասնակցությունից, եթե ոչ շուտ, քան հերթական ատեստավորումից 1 (մեկ) տարի հետո նախքան հերթական ատեստավորման համար սահմանված վերապատրաստման ժամկետը ուսուցիչը, դասընթացների մասնակցելով, կուտակել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2020 թվականի սեպտեմբերի 7-ի N 1162-Ա/2 հրամանով սահմանված չափով անհրաժեշտ կրեդիտներ և դրանք ստացված (կուտակված) լինելը հավաստող վկայականը հերթական վերապատրաստումից առաջ ներկայացրել է դպրոցի տնօրենին:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից առանց առարկությունների ընդունված Վերապատրաստման ծառայության համար Պայմանագրի գնի վճարումը չկատարելու կամ կետանցելու դեպքում՝ նաև Պայմանագրի 5.7 կետով նախատեսված կետանցի տույժը:

2.3.2. ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան՝ Վերապատրաստման ծառայությունների մատուցումն իրականացնել թարմացված դասընթացների միջոցով:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. որպես վերապատրաստման ոլորտում ընդգրկված (երաշխավորված) կազմակերպություն՝ վերապատրաստման ամբողջական ծրագրի կամ դրա որևէ բաղադրիչի մասով համապատասխանել ՀՀ ԿԳՄՍ նախարարության՝ 2021 թվականի մարտի 5-ի N 24-Ն որոշման հավելվածով ամրագրված՝ «Ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների ցանկի ձևավորման կարգի» (այսուհետ՝ Կարգ 2), այդ թվում, 3-5-րդ, 7-11-րդ, 19-րդ, 24-25-րդ կետերի պահանջներին: Ընդ որում, սույնով Կատարողը հաստատում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ **2021 թվականի մայիսի 18-ի՝** «Ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների և դասընթացների ցանկը հաստատելու մասին» **թիվ 780-Ա/2** հրամանի **հավելվածով ամրագրված ցանկում՝** խմբագրված ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ **2021թ. հունիս 4-ի N 894-Ա/2** հրամանով և լրացված **2021 թվականի հունիսի 11-ի՝ 934-ԱՔ** հրամանով (այսուհետ՝ Ցանկ)՝ հիշյալ կարգի և ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան ընդգրկված լինելը, հակառակ դեպքում տվյալ ցանկից հանված լինելու կամ դրանում ներառված չլինելու և(կամ) դրանցից բխող կամ դրանց հետ կապված՝ Կատարողի կողմից թույլ տրված խախտումները Պատվիրատուի կողմից հայտնաբերվելու պահից կրում է այդօրինակ խախտումների հետևանքով պատճառված վնասը լրիվ ծավալով հատուցելու պարտականությունը, եթե Կատարողի կողմից թույլ տրված խախտումները վերացնելու այլ միջոց և եղանակ Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ չի սահմանվել.

2.4.2. անձամբ (ներառյալ՝ իր վերապատրաստող մասնագետների միջոցով), պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով ապահովել Վերապատրաստման ծառայությունների մատուցման

ընթացքում Ցանկում իր ընգրկված լինելը, իսկ իրեն ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից Ցանկից ժամկետից շուտ հանվելու դեպքում անհապաղ այդ մասին գրավոր (ներառյալ՝ առձեռն և պատշաճ առաքված էլեկտրոնային ծանուցման և հաջորդող հեռախոսազանգի միջոցով) տեղեկացնել Պատվիրատուին.

2.4.3. Պայմանագրի Հավելված N1-ով սահմանված ժամկետներում, Պայմանագրով (ներառյալ՝ դրա հավելվածներով) և կիրառելի օրենսդրական, ենթաօրենսդրական նորմատիվ և այլ իրավական ակտերով սահմանված պայմաններով ու պահանջներին համապատասխան ապահովել Վերապատրաստման ծառայության պատշաճ, որակյալ և սահմանված լրիվ ծավալով (ներառյալ՝ վերապատրաստման ծրագրի ուսումնաթեմատիկ պլանին համապատասխան) մատուցումը՝ ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ.

2.4.4. Պայմանագրով նախատեսված յուրաքանչյուր դեպքում վճարել Պայմանագրով նախատեսված տուժանքը.

2.4.5. Պայմանագրի գործողության, ինչպես նաև Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում իր նկատմամբ լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին.

2.4.6. պատշաճ, որակյալ, ժամանակին, բարեխղճորեն և ամբողջ ծավալով կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունը, ներառյալ՝ ապահովել ուսուցչի վերապատրաստման գործընթացի անմիջական պատասխանատու լինելը, և այդ գործընթացի՝ համապատասխանությունը սույն Պայմանագրում նշված Կարգերով սահմանված չափանիշներին.

2.4.7. ապահովել ուսուցիչների վերապատրաստման մոդուլների՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության սահմանած չափորոշիչների և ծրագրերի հիման վրա իր՝ որպես վերապատրաստող կազմակերպության կողմից մշակված լինելը, ինչպես նաև սահմանված կարգով և ժամկետներում նույն նախարարության կողմից հաստատված լինելը.

2.4.8. ըստ առանձին բաղադրիչների Վերապատրաստմանը ուսուցչի մասնակցության առանձնահատկությունները, ներառյալ՝ հերթականությունը, նախապես համաձայնեցնել Պայմանագրի մյուս կողմի հետ.

2.4.9. Վերապատրաստման դասընթացին մասնակցած, վերապատրաստման չափորոշչով և ծրագրով սահմանված չափով կրեդիտներ հավաքած ուսուցչին վերապատրաստման դասընթացի ավարտից հետո ողջամիտ սեղմ ժամկետում տրամադրել վերապատրաստման դասընթացին մասնակցության և հավաքած կրեդիտների վերաբերյալ փաստաթուղթը.

2.4.10. յուրաքանչյուր վերապատրաստման ավարտից հետո՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, իր պաշտոնական կայքում կամ Հայկական կրթական միջավայրի պաշարների շտեմարանում (https://lib.armedu.am/) տեղադրել վերապատրաստման մասնակիցների՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2020 թվականի սեպտեմբերի 7-ի N 1162-Ա/2 հրամանով սահմանված ավարտական հետազոտական աշխատանքները.

2.4.11. ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2021 թվականի մարտի 5-ի N 24-Ն հրամանով հաստատված Կարգին համապատասխան՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարություն ներկայացնել ամփոփիչ բովանդակային և ֆինանսական հաշվետվություններ, յուրաքանչյուր վերապատրաստման ավարտից հետո՝ 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն ներկայացնել վերապատրաստման դասընթացի վերաբերյալ ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 1-ի N466-Ն որոշման Հավելվածով սահմանված ձևի հաշվետվություն.

2.4.12. իր գործունեությունն իրականացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարության սահմանած՝ ուսուցչի վերապատրաստման չափորոշիչներին և իր՝ որպես վերապատրաստող կազմակերպության կողմից մշակված վերապատրաստման ծրագրերին համապատասխան.

2.4.13. գործելով որպես երաշխավորված և Ցանկում ընդգրկված կազմակերպություն՝ իր կողմից ձևավորված խմբերում ներգրավված հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների վերապատրաստումն ապահովել ուսուցիչների մասնագիտական զարգացման և վերապատրաստումների ծրագրի բովանդակությանը համապատասխան և ՀՀ գործող օրենսդրության ու կիրառելի այլ կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն.

2.4.14. ապահովել լիարժեք համապատասխանություն վերապատրաստման բովանդակությանը ներկայացվող պահանջներին, ինչպես նաև ՀՀ գործող օրենսդրությամբ և կիրառելի այլ անհատական իրավական ակտերով սահմանված վերապատրաստման ակնկալվող արդյունքների ու նպատակների իրագործումը, դրանցով սահմանված խնդիրների արդյունավետ լուծմանը վերապատրաստման դասընթացների միջոցով նպաստելը, Վերապատրաստման ծառայությունները վերապատրաստման օրինակելի ծրագրի թեմատիկ պլանավորմանը համապատասխան իրականացվելը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ.

3.1. Մատուցված Վերապատրաստման ծառայությունն ընդունվում է Կողմերի, ներառյալ՝ Պատվիրատուի և Կատարողի միջև եռակողմ կազմված և ստորագրված հանձնման-ընդունման փաստաթղթով (արձանագրությամբ)՝ նշելով նաև փաստաթղթի կազմման ամսաթիվը:

3.1.1. Մինչև Պայմանագրով Վերապատրաստման ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ՝ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Վերապատրաստման ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հանձնման-ընդունման ակտ) և հանձնման-ընդունման արձանագրությունը՝ 2-ական (երկուական) օրինակով:

3.2. Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Վերապատրաստման ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով և ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված միջոցները և(կամ)

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3. Եթե Պայմանագրի 3.3. կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Վերապատրաստման ծառայությունը համարվում է ընդունված, և Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշվելով՝ մինչև 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 1 (մեկ) օրինակը:

3.3.1. Անպատշաճ Վերապատրաստման ծառայության դեպքում Պատվիրատուն Պայմանագրի 3.3. կետով սահմանված ժամկետում Կատարողին է ներկայացնում համապատասխան ծառայությունը (արդյունքները) չընդունելու վերաբերյալ պատճառաբանված մերժումը (առարկությունը):

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ.

4.1. Սույն Պայմանագրով Կատարողի կողմից (բոլոր բաղադրիչները ներառող ամբողջական վերապատրաստման դասընթացի ծրագրով) մատուցման ենթակա Վերապատրաստման ծառայության ընդհանուր գինը կազմում է 24000 (քսանչորս հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն), որը հաշվարկվում է ըստ վերապատրաստման ժամաքանակի հետևյալ համամասնությամբ. մատուցվող վերապատրաստման ծառայության ամբողջ ծրագրի (110 ժամ) կիրականացվի առակա ձևաչափով: Հաշվարկը կատարվում է ըստ վերապատրաստման ժամաքանակի՝ հետևյալ բանաձևով՝

«ՎԾ$_{ա}$ / Դ$_{ա}$ * ԺՔ», որտեղ

ՎԾԸԱ-ն՝ Վերապատրաստման առկա կարգով իրականացվող դասընթացի ընդհանուր արժեքն է (24.000 (քսանչորս հազար) ՀՀ դրամ),

ԴԺՔ-'ն՝ Վերապատրաստման դասընթացի համար նախատեսված առավելագույն ժամաքանակն է (110 ժամ),

ԺՔ-ն՝ մատուցված 'վերապատրաստման ծառայության՝ ամբողջ ծրագրի կամ դրա բաղադրիչի ժամաքանակն է:

4.1.1. Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ինչպես նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները, որոնք Պատվիրատուի կողմից լրացուցիչ կամ առանձին փոխհատուցման, հատուցման կամ վճարման ենթակա չեն:

4.1.2. Ծառայության մատուցման արժեքը՝ Պայմանագրի գինը, կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու Պայմանագրի գինը՝ բացառությամբ ՀՀ գործող օրենսդրությամբ և սույն Պայմանագրի 4.2. կետով սահմանված դեպքերի:

4.2. Սույն Պայմանագրով Կատարողի կողմից Վերապատրաստման ծառայությունները վերապատրաստման ծրագրի առանձին բաղադրիչի մասով մատուցվելու դեպքում, սույն Պայմանագրի 1.6. կետին համապատասխան, պատշաճ մատուցված Ծառայության համար վճարումը ենթակա է կատարման համամասնորեն՝ միայն տվյալ բաղադրիչի կամ բաղադրիչների մասով՝ չգերազանցելով պետության կողմից սահմանված ֆինանսավորման նորմատիվները (առավելագույն արժեքը):

4.3. Պատվիրատուն իրեն մատուցած Վերապատրաստման ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով՝ անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Վերապատրաստման ծառայության հանձնում-ընդունումից հետո՝ համապատասխան արձանագրության հիման վրա՝ Պայմանագրին և դրա Հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցին համապատասխան: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսվա ընթացքում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4.4. Կատարողի կողմից լրացուցիչ մատուցված ծառայությունների կամ լրացուցիչ կատարված աշխատանքի արժեքը կամ դրանց հետ կապված լրացուցիչ ծախսերը սույն Պայմանագրով Պատվիրատուի և (կամ) վերապատրաստող ուսուցչի կողմից վճարման, հատուցման կամ փոխհատուցման ենթակա չեն: Սույն Կատարողը տալիս է իր համաձայնությունն ու հաստատում է, որ իր կողմից Պատվիրատուի միջոցների հաշվին Վերապատրաստման ծառայությունների մատուցման կապակցությամբ վերապատրաստվող ուսուցչի համար դրանց դիմաց կամ դրանց հետ կապված վճարման որևէ պարտավորություն չի կարող առաջանալ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ.

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Վերապատրաստման ծառայության մատուցման ընթացքում սույն Պայմանագրի, ՀՀ գործող օրենսդրության և կիրառելի իրավական ակտերի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրի N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Վերապատրաստման ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողին պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարից գանձվում է 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով չափով տուգանք: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև Վերապատրաստման ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն անպատշաճ լինելու պատճառով Պատվիրատուի կողմից այն չընդունվելու դեպքում:

5.3. Պայմանագրով նախատեսված Վերապատրաստման ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր կետանցված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված կամ անպատշաճ մատուցված ծառայության գնի 0,05 % (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4. ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից Կատարողին Ցանկից հանվելու դեպքում, ինչպես նաև այդ մասին Կատարողի կողմից Պատվիրատուին գրավոր չտեղեկացնելու և Ծառայությունների մատուցումը շարունակվելու դեպքում Կատարողը սույնով տալիս է իր համաձայնությունը՝ սույն Պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանի լուծվելու մասին, ինչպես նաև պարտավորվում է վերապատրաստման համապատասխան ժամանակահատվածի համար՝ սկսած այն օրվանից, երբ իրավասու չի եղել մատուցելու Վերապատրաստման ծառայությունները, Պատվիրատուին վերադարձնել Վերապատրաստման (կամ համապատասխան բաղադրիչի մասով) ծառայության արժեքը, ինչպես նաև չվերադարձված գումարի 1 % (մեկ) տոկոսի չափով վճարել տույժ՝ վճարի վերադարձի կետանցի յուրաքանչյուր օրվա համար:

5.5. Պայմանագրով Կատարողին վճարման ենթակա տուժանքը հաշվարկվում է Վերապատրաստման ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ, սակայն կարող է և հաշվանցվել Կատարողի կողմից Պատվիրատուին վճարման (ներառյալ՝ վերադարձման) ենթակա գումարների հետ:

5.6. Տուժանքի, մասնավորապես՝ տույժերի և(կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց: Տուժանքի վճարումը Կատարողին չի ազատում սույն Պայմանագրով սահմանված դեպքերում վնասի հատուցման պարտավորությունից:

5.7. Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.4 կետով նախատեսված ժամկետի խախտմամբ վճարի կետանցման յուրաքանչյուր օրվա համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա և կետանցված գումարի 0,05 % (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով: Ընդ որում, սույն Պայմանագրով կանխավճարի նկատմամբ տույժ կիրառելի չէ:

5.8. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

5.9. Կատարողի կողմից սույն Պայմանագրի կատարումից հրաժարվելու դեպքում Կատարողը կրում է ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված բացասական իրավական, ֆինանսանյութական և այլ հետևանքները, ներառյալ՝ Պատվիրատուի վնասները լրիվ հատուցելու պարտավորությունը:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ) ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ.

Սույն Պայմանագրով և դրա հիման վրա կնքված համաձայնագրերով (հավելվածներով) պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերն օբյեկտիվորեն և ակնհայտորեն չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ.

7.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.2. Պայմանագրի հիման վրա ծագած Կողմի վճարման (ներառյալ՝ վնասի հատուցամն) պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց Կողմերի գրավոր կազմված, իրավասու անձի ստորագրությամբ և կնիքով հաստատված փոխադարձ համաձայնության՝ ՀՀ գործող օրենսդրության պահանջների պահպանմամբ:

7.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (այդ թվում՝ տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրելու (ընտրված մասնակից) ճանաչելու մասին կամ նրա հետ Պայմանագիրը կնքելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության և կիրառելի այլ իրավական ակտերի պահանջներին կամ չի բխում այդօրինակ պահանջներից կամ ընդունվել է այդօրինակ պահանջների խախտմամբ, ապա այդ հիմքերն ի հայտ գալու կամ դրանց մասին Պատվիրատուին հայտնի դառնալու պահից Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության գործող (ներառյալ՝ գնումների մասին) օրենսդրության համաձայն՝ հիմք կհանդիսանային սույն Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում սույն Պայմաագրով սահմանված դեպքերում և հիմքերով Պայմանագիրը միակողմանի լուծելու հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների, ներառյալ՝ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավորվում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն՝ այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են կարգավորման բանակցությունների միջոցով՝ արտադատական կարգով՝ առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում: Սահմանված ժամկետում Կողմերի միջև գրավոր փոխադարձ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճը կարող է լուծվել ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դատական կարգով և դեպքերում:

7.5. Պայմանագրում փոփոխություններ և(կամ) լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ հավելվածի տեսքով համաձայնագիր կնքելու միջոցով: Պայմանագրի հավելվածները դրա անբաժանելի մասն են կազմում:

7.5.1. Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Վերապատրաստման ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Վերապատրաստման

ծառայության միավորի (Պայմանագրի) գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, իսկ ՀՀ կառավարության սահմանած կարգավորումները կիրառելի չլինելու դեպքում փոփոխությունները կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ այնքանով, որքանով դա չի խախտում ՀՀ գործող օրենսդրության պահանջները և չի հակասում դրանց:

7.6. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով սահմանված այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկությամբ և դրա վերաբերյալ Պատվիրատուի համաձայնության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Վերապատրաստման ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Վերապատրաստման ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 (հինգ) օրացուցային օր առաջ: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում Վերապատրաստման ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 30 (երեսուն) օրացուցային օրով, բայց ոչ ավելի, քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները համապատասխանաբար տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

7.7.1. Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները սույն Պայմանագրի կարգավորման առարկան չեն կազմում և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար, Կատարողի ցանկացած պարտավորության կամ նրա նկատմամբ պահանջի կամ պահանջի իրավունքի մասով պատասխանատու է Կատարողը:

7.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով՝ բացառությամբ սույն Պայմանագրով սահմանված Պայմանագրի միակողմանի լուծման համար հիմք հանդիսացող՝ էական խախտման դեպքերի, ինչպես նաև չի կարող ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման վերաբերյալ Կողմերի միջև փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով Վերապատրաստման ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ պարտադիր նշելով դրա հրապարակման ամսաթիվը: Կատարողը համարվում է Պայմանագիրը միակողմանի լուծվելու վերաբերյալ պատշաճ ծանուցված համապատասխան ծանուցման՝ սույն կետով սահմանված կարգով հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի

լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10. Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.11. Սույն Պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, հասարակ գրավոր ձևով, Կողմերի ստորագրությամբ մեկ միասնական փաստաթուղթ կազմելու և ստորագրելու միջոցով՝ հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ԿԳՄՄՆ «Երևանի Գևորգ Էմինի անվան N 182 ավագ դպրոց» հիմնադրամ	«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ
Հասցե՝ք. Երևան 0070, Կորի փողոց 55 (Կրիվոյ)	ք. Երևան, Ալեք Մանուկյան 11
Բանկ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ՓԲԸ	«ԱյԴիԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 1510013214140100	Հ/Հ 11817065324000
ՀՎՀՀ 01518849	ՀՎՀՀ 01505821
Տնօրեն՝ Ռ. Ալավերդյան	Տնօրեն՝ (ռեկտոր) Դավիթ Խիթարյան
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«26» 08. 2021 թ. կնքված
ԵՔ-ԳԷԱԴ-ՄԱԾՁԲ-2021/2-182-1
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	79631200	Հանրակրթության բնագավառի օրենսդրություն» (9 ժամ), «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում» (20 ժամ) և «Մասնագիտական զարգացում» (81 ժամ):Վերապատրաստումը առկա կարգով: ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ Ուսուցչի վերապատրաստման նպատակները. • Ծանոթացնել ուսուցիչների կրթության բնագավառի և իրենց գործունեությանը վերաբերող օրենսդրական ակտերին: • Բարձրացնել ուսուցիչների ընդհանուր և հոգեբանամանկավարժական պատրաստվածության մակարդակը, զարգացնել ուսուցիչների ակադեմիական և մանկավարժական կարողունակությունը, ապահովել շարունակական մասնագիտական զարգացում: • Ծանոթացնել ուսուցիչներին դասավանդման ժամանակակից մեթոդների հիմնադրույթներին և նորագույն կրթական տեխնոլոգիաներին՝ ապահովելով դրանց կիրառության ուսուցումը: • Զարգացնել ուսուցչի մասնագիտական	դրամ	24000	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	2021 թվականի ընթացքում, պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ,բայց ոչ ուշ, քան նոյեմբերի 30-ը:

		հմտությունները, ինքնաուսուցման և ինքնադրսևորման կարողությունները: • Ուսուցման գործընթացը ուղղորդել դեպի պլանավորած արդյունքների հասանելիության ապահովում: Ուսուցչի վերապատրաստման բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները Վերապատրաստման դասընթացի հիմնական սկզբունքը կառուցված է «պոստմոդեռնիստական» մանկավարժության մոտեցման, որը ծգտում է ապահովել տարբեր մանկավարժական սկզբունքների ընդգրկում, յուրաքանչյուր կենդանի տարրի կրթության հնարավորությունները՝ հաշվի առնելով սեռը, տարիքը, ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկությունները, ընդունակությունները, դրդապատճառները, պահանջմունքներն ու հետաքրքրությունները, անձնային որակները, նրա ինտելեկտուալ բազմակողմանիությունը՝ հասարակական, տնտեսական, կրոնական և այլն: Կիրառելով հումանիստական մանկավարժության տարրերը վերապատրաստման ընթացքում կդրսևորվի անձնակենտրոն մոտեցում, հասարակության, դպրոցի, մանկավարժների ուշադրությունը բևեռելով ակտիվ վերապատրաստվողի՝ որպես ուսումնական գործընթացի իրավահավասար սուբյեկտի: Լիիրավ մասնակցի վրա հաշվի առնելով վերջինիս ներուժն ու ձեռք բերած փորձը, ինչպես նաև այն, որ վերապատրաստվողը դառնա վերապատրաստման համախոհը, սեփական կրթության հեղինակը: Ուսուցման գործընթացի մասնակիցների փոխհարաբերությունները կառուցվում են

		ժողովրդավարության, անձի ազատ զարգացման իրավունքի,փոխըմբռնման, փոխադարձ հարգանքի սկզբունքների հիման վրա: Այսօր հույժ կարևոր և արդիական են ժամանակակից միտումները լեզվակրթության ասպարեզում, որը, որպես մասնագիտական կոմպետենտություն համակցվում է ուսուցչի, որպես շփման հաղորդակցության սուբեկտի անձնային որակների ձևավորման մակարդակին՝ շեշտադրելով մի կողմից մանկավարժական նպատակադրումը, մանկավարժական մտածողությունը (նախագծային-գնոստիկ ընդունակություններ), մյուս կողմց՝ մանկավարժական ռեֆլեքսիան,մանկավարժական տակտը, մանկավարժական ուղղվածության գաղափարները (ռեֆլեքսիվ-պերցեպտիվ ընդունակություններ): Այսպիսով, գերակայությունը տրվում է մանկավարժական կադրերի կոմպետենտությանը՝ վերապատրաստվողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորման դրական մոտեցմանը, ինքնուսուցմանը և ինքնագնահատմանը: Այդ տեսանկյունից առանձնահատուկ ուշադրություն է դարձված վերապատրաստման դասընթացների մասնակից յուրաքանչյուր ուսուցչի ինքնազարգացմանը, ինքնավերափոխմանը, ինքնուսուցմանը, մասնագիտական ինքնորոշմանը, ինչպես նաև համատեղ գործունեության ունակությունների ձեռքբերմանը: Ուսուցչի վերապատրաստման բովանդակությունը : Վերապատրաստման թեմաները և դրանց հատկացված ժամաքանակները ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ՝ 20 ԺԱՄ					

		ՄԱՍ 1 - ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՅԴ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ /8 ժամ/ Ուսումնառության թեմաներ. ենթաթեմաներ • Ուսուցման կառավարման համակարգեր /emis.am/ • Ուսուցման կառավարման համակարգերի ֆունկցիոնալ հնարավորությունները և այդ միջավայրի կիրառումը էլեկտրոնային դասընթացի ստեղծման, կազմակերպման և կառավարման գործընթացում • էլեկտրոնային դասընթացի բովանդակության մշակման մեթոդներ • էլեկտրոնային դասընթացի գնահատում • Ուսումնական նյութերի և այլ մոդուլների տեղակայումը դասընթացում ՄԱՍ 2 - ՏՀՏ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԱԾՈՒՄԸ /8 ժամ/ Ուսումնառության թեմաներ, ենթաթեմաներ • էլեկտրոնային ռեսուրսների տեսակներն ըստ ուսումնական նպատակների • Ուսումնադաստիարակչական գործընթացի պլանավորում առցանց ՏՀՏ գործիքների միջոցով • Համագործակցային խմբային կամ անհատական աշխատանքների իրականացում առցանց ՏՀՏ գործիքների միջոցով • Էլեկտրոնային գրատախտակ. տեխնիկական բնութագրեր. աշխատանքային					

		սկզբունքներ, անհրաժեշտ պայմաններ • ՈՒսումնական գործընթացում էլեկտրոնային գրատախտակի կիրառման եղանակները • Առարկայական ուսումնական բովանդակային թվային նյութերի ստեղծում առցանց ՏՀՏ գործիքների միջոցով • Առարկայական թվային առաջադրանքների մշակում • Առարկայական թվային առաջադրանքների ստեղծումը առցանց թվային գործիքների միջոցով ՄԱՍ 3 - ԿՐԹԱԿԱՆ ԿԱՅՔԵՐ /4 ժամ/ Ուսումնառության թեմաներ, ենթաթեմաներ • Կայքեր, կայքերի տեսակներն ըստ նպատակների • Կրթական կայքերի էությունը, օգտագործման առանձնահատկությունները, ընձեռած հնարավորությունները • Ամպային տեխնոլոգիաներ: Google Drive տեխնոլոգիայի տեխնիկական բնութագիրը, աշխատանքային սկզբունքները և անհրաժեշտ պայմանները Գործնական ուսումնառության թեմաներ, ենթաթեմաներ • Առարկայական կրթական կայքերի պատրաստում Google Sites գործիքի կամ բլոգի միջոցով ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ՝ 9 ԺԱՄ ՄԱՍ 1 - ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՆՔԵՐԸ, ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ. ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ /1 ժամ/ Ուսումնառության թեմաներ, ենթաթեմաներ • Կրթության իրավունք • ՀՀ Սահմանադրությունը կրթության իրավունքի մասին					

		• Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները • Կրթության լեզուն • Հանրակրթության պետական չափորոշիչը ՄԱՍ 2 – ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ /3 ժամ/ Ուսումնառության թեմաներ, ենթաթեմաներ • Ուսուցիչը և կրթական գործընթացի մյուս մասնակիցները. իրավունքներ եվ պարտականություններ • Ուսուցիչը և հաստատության տնօրենը • Ուսուցիչը և մանկավարժական մյուս աշխատողները • Ուսուցիչը և սովորողը • Ուսուցիչը և սովորողի ծնողը • Սովորողի իրավունքներն ու պարտականությունները • Սովորողի ծնողի իրավունքներն ու պարտականությունները • Մանկավարժական աշխատողների իրավունքներն ու պարտականությունները ՄԱՍ 3 – ՈՒՍՈՒՑԻՉԸ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ, ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ, ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ /2 ժամ/ Ուսումնառության թեմաներ, ենթաթեմաներ • Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչը • Ուսուցիչը որպես աշխատանքային իրավահարաբերությունների մասնակից:					

		• ՈՒսուցչի աշխատանքային հարաբերությունների ծագման հիմքերը,նրա աշխատանքային իրավունքների պաշտպանությունը: • ՈՒսուցիչը, նրա վերապատրաստումը, ատեստավորումը և տարակարգի շնորհումը • ՈՒսուցչի ատեստավորման իրավական հիմքերը, ուսուցչի որակավորման տարակարգերը, դրանց բնութագրիչները և շնորհման չափանիշները. որակավորման տարակարգերին համապատասխան հավելավճար տալը: • Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգ • ՄԱՍ 4 – ԵՐԵԽԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ /3 ժամ/ Ուսումնառության թեմաներ, ենթաթեմաներ • Երեխայի կրթության իրավունքը • Երեխայի կրթության իրավունքի երաշխիքները • Երեխայի կրթությանն առնչվող հիմնական իրավունքները • Ընտանեկան բռնության կանխարգելման խնդիրներ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄ, ԱՎԱՐՏԱԿԱՆ, ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ՝ 81 ԺԱՄ ՄԱՍ 1 - ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ /2 ժամ/ Ուսումնառության թեմաներ, ենթաթեմաներ • Ներածություն: Արդի համաշխարհային կրթական զարգացումների հիմնական միտումները • Ուսուցման նոր տեխնոլոգիաներ					

		• Ուսուցման ԽԻԿ համակարգ • Էլեկտրոնային/հեռավար/ուսուցում • Հեռավար ուսուցման կազմակերպում • «Հիբրիդ» /խառը տիպի/ ուսուցում • «Հիբրիդ» ուսուցման մոդելներ • «Ուսուցման կենտրոնների տեղափոխման» մոդել • «Շրջված դասարան» մոդել • Ուսումնառության համընդհանուր ձևավորում ՄԱՍ 2 - ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ /8 ժամ/ Ուսումնառության թեմաներ, ենթաթեմաներ • Կրտսեր դպրոցականների իմացական պրոցեսների զարգացումը • Դեռահասի ուսումնական գործունեությունը • Դեռահասի փոխհարաբերությունները չափահասների հետ • Մանկավարժի անձնային որակները և ազդեցության հնարները արդյունավետ մանկավարժական գործընթացում • Ինքնագիտակցության զարգացումը • Դպրոցական կյանքում հիմնական անցումային փուլերը և երեխայի հարմարման առանձնահատկությունները • Հասարակական ակտիվությունը եվ աշխարհայացքի ձեվավորումը • Հմտությունների ուսուցումը • Ուսումնական գործունեության ընթացքում ծագող հիմնական խնդիրները և ուսուցչի դերը դրանց հաղթահարման գործընթացում ՄԱՍ 3 - ԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ					

		ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ /9 ժամ/ Ուսումնառության թեմաներ, ենթաթեմաներ • Ժողովրդավարության մշակույթի ձեվավորման կարողունակություններ • Ժողովրդավարության մշակույթի ձեվավորման կարողունակությունների արժեքներ և վերաբերմունք բաղադրիչները • Դասի պլանավորում առարկայի դասավանդման ընթացքում ժողովրդավարության մշակույթի ձեվավորման կարողունակությունների արժեքներ և վերաբերմունք բաղադրիչների զարգացմամբ • Դասի պլանավորման նմուշ-օրինակի ներկայացում առարկայի դասավանդման ընթացքում ժողովրդավարության մշակույթի ձևավորման կարողունակությունների արժեքներ և վերաբերմունք բաղադրիչների զարգացմամբ: • ՄԱՍ 4- ԳՆԱՀԱՏՈՒՄ /8 ժամ/ Ուսումնառության թեմաներ, ենթաթեմաներ • Գնահատման նպատակը • Ընթացիկ գնահատման հիմնական նպատակները, խնդիրները և գործառույթները • Գնահատման մեթոդներ • Գնահատման տեսակները • Գնահատում. Ձևավորող և քանակական գնահատում • Ուսուցանող և միավորային գնահատումների բնութագրիչ առանձնահատկություններ • Ուսուցանող գնահատում • Միավորային գնահատման իրագործման ընդունված տեսակները • Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) սովորողի միավորային գնահատման առանձնահատկությունները					

		• Ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման ընդհանուր սանդղակ • Առաջադրանքների բարդության բնութագրման հատկանիշներ • Հայտորոշում • Հայտորոշիչ թեստի մշակման և կազմման մեթոդաբանություն • Թեստի տեսակները և կառուցման սկզբունքները. թեստերում կիրառվող առաջադրանքների տեսակները • Ամփոփիչ թեստի մշակում և կազմում • Գնահատման սանդղակ ՄԱՍ 5 - ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ /9 ժամ/ Ուսումնառության թեմաներ, ենթաթեմաներ • Ներառական կրթության օրենսդրական հիմքերն ու համընդհանուր սկզբունքները • Սովորողների ուսուցման կազմակերպումը հանրակրթական ընդհանուր ծրագրեր իրականացնող ներառական ուսումնական հաստատություններում • Երեխաների ու նրանց կրթական կարիքների բազմազանությունը • Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ. Օրենսդրական կարգավորումները և աջակցության տրամադրումը ՄԱՍ 6 – ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ /19 ժամ/ Ուսումնառության թեմաներ, ենթաթեմաներ • Հանրակրթական պետական չափորոշիչ • Առարկայական չափորոշչային պահանջներ, առարկայական ծրագրեր, թեմատիկ պլանների մշակում և կազմում չափորոշչային պահանջներին համապատասխան • ԱՈՒՊ • Ավանդական եվ փոխներգործուն մեթոդներ					

		• Դասավանդման պասիվ մեթոդներ • Դասավանդման ակտիվ մեթոդներ • Դասավանդման ինտերակտիվ մեթոդներ • Ուսումնառության մեթոդները • Դասավանդման մեթոդների և մեթոդական հնարների նկարագրություն • Դասի պլանավորում • Առարկայական դասի պլանավորում լսարանային ուսուցման ժամանակ • Առարկայական դասի պլանավորում լսարանային ուսուցման ժամանակ /խմբային համագործակցային աշխատանք/ • Առարկայական դասի պլանավորում ԽԻԿ մոդելով • Առարկայական դասի պլանավորում հինգ քայլով՝ «Կենտրոնների տեղափոխման» մոդելով «Պլանավորում» բաժինը ներկայացված է առանձին հավելվածներով . ՄԱՍ 7- ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ /18 ժամ/ Ուսումնառության թեմաներ, ենթաթեմաներ • Հետազոտական աշխատանքներ. Նկարագիր, պահանջներ, կառուցվածք • Հետազոտական աշխատանքների մշակում և կազմում /սահմանված չափանիշներով/ • Հետազոտական աշխատանքի ընդհանուր մեթոդաբանությունը • Հետազոտական աշխատանքների դասակարգումը և տարատեսակները • Փաստարկման ընդհանուր տրամաբանությունն ու մեթոդաբանությունը հետազոտական աշխատանք կատարելիս • Հղումները հետազոտական հրապարակումներում • Ակադեմիական ազնվություն և գրագողություն					

		• Հետազոտական աշխատանք գրելու ընդհանուր սկզբունքները • Հետազոտական աշխատանքի թեմաների ընտրություն ՄԱՍ 8- ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ /8 ժամ/ • Առարկայական դասի պլանավորում. դասալսում , հետադարձ կապ Գործնական ինքնուրույն աշխատանք . Դասի վարում Վերապատրաստման արդյունքում ձևավորվող ընդհանրական հմտությունները. վերապատրաստման արդյունքում ակնկալվող վերջնարդյունքները Վերապատրաստման ավարտին ուսուցիչը պետք է՝ Իմանա. • ուսուցիչներին և աշակերտներին ներկայացվող պահանջները՝ ըստ կրթության օրենսդրության. • առարկայի դասավանդման մեթոդաբանության դերը և տեղը ներկա կրթական համակարգում. • մանկավարժական հոգեբանության ազդեցությունը տվյալ առարկայի ուսուցման գործընթացում. • կրթության հայեցակարգերը. • առարկայակն կրթական չափորոշիչները և ծրագրերը: Տիրապետի. • ուսուցման նորագույն մեթոդներին և հնարներին. այդ թվում՝ հաշվի առնելով համընդհանուր ներառման քաղաքականությունը. • տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների հիմունքներին. այդ թվում՝ հեռավար ուսուցման ուղղությամբ. • սովորողների ստուգման և գնահատման համակարգերին՝ շեշտադրելով գմահատման տարբեր գործիքակազմերի. այդ թվում՝ ձևավորող գնահատմանը տիրապետելու անհրաժեշտությանը: Կարողանա.					

		• օրենսդրությունից ելնելով հաստատել բնականոն իրավահարաբերություններ սովորողների, նրանց օրինական ներկայացուցիչների (ծնողների, խնամակալների), գործընկերների, դպրոցի տնօրինության հետ, պաշտպանելով սովորողի իրավունքները՝ իրականացնել իր լիազորությունները, • ամփոփել, մեկնաբանել, ներկայացնել և վերլուծել բովանդակային տեղեկատվությունը մասնագիտական միջավայրում, օգտագործել իր ձեռքբերումները մասնագիտական գործունեության ընթացքում, • սովորողների մեջ ձևավորել ուսման նկատմամբ հետաքրքրություն և սովորածը կիրառելու գիտակցում, • Նպաստել սովորողների միկջև ինքնակառավարման տարրերի և նախաձեռնողական ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը, • պլանավորել իր մանկավարժական գործունեությունը և սահմանել նպատակներ՝ հաշվի առնելով սովորողների անհատական առանձնահատկությունները, • դասավանդման գործնթացում արդյունավետ ներառել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին, • ստեղծել հարգանքի և փոխըմբռման վրա հիմնված բարենպաստ կրթական միջավայր, հաղորդակցման ազատ և բարեկիրթ մթնոլորտ, • կայացնել արդարացի վճիռներ տարբեր իրավիճակներում, • կիրառելով դասավանդման առավել արդյունավետ տեխնոլոգիաներ՝ապահովելով տարբերակված ուսուցման կազմակերպում՝հետերոգեն խմբերի առկայության պայմաններում, • կանխատեսել և գնահատել սովորողի և					

		սեփական գործունեությունը, վերլուծել և անհրաժեշտ կատարել. • կիրառել գնահատման տարբեր ձևեր, • հետևողականորեն կատարելագործել իր առարկայական-մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, • փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով համագործակցել գործընկերների հետ, իրականացնել ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ԿԳՄՍՆ «Երևանի Գևորգ Էմինի անվան N 182 ավագ դպրոց» հիմնադրամ
Հասցե՝ք. Երևան 0070,
Կորի փողոց 55 (Կրիվոյ)
Բանկ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1510013214140100
ՀՎՀՀ 01518849

Տնօրեն՝ Ռ. Այվազյան

(ստորագրությունը)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11
«ԱյԴիԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 11817065324000
ՀՎՀՀ 01505821

Տնօրեն՝ (ռեկտոր) Դավիթ Խիթարյան

(ստորագրությունը)
Կ.Տ.

Հավելված N 2
«26» 08 2021 թ. կնքված
ԵՔ-ԳԵԱԴ-ՄԱԵՁԲ-2021/2-182-1
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների. այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79631200	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ (Թվով մեկ աշխատակից)	0	0	0	0	0	0	0	0	0	24000	24000	24000	24000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ԿԳՄՍՆ «Երևանի Գևորգ Էմինի անվան N 182 ավագ դպրոց» հիմնադրամ
Հասցե՝ք. Երևան 0070, Կորի փողոց 55 (Կրիվոյ)
Բանկ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1510013214140100
ՀՎՀՀ 01518849

Տնօրեն՝ Ռ. Ալավերդյան

(ստորագրությունը)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11
«ԱՅԴԻԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 11817065324000
ՀՎՀՀ 01505821

Տնօրեն՝ (ռեկտոր) Դավիթ Խիթարյան

(ստորագրությունը)
Կ.Տ.

Հավելված 3

« » 20 թ. կնքված

ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի հաշառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

« » 20 թ. կնքված

ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի

Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____

պայմանագրի նպատակն անվանումը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման

նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

ստորագրություն